

իրենց ունեցուածքի հասոյթէն: Տասը հազարէն աւելի որբեր գրկուած են իրենց ժառանգական իրաւունքներէն. դիմողը եթէ հայ է ծագումով, արդէն բաւական է, որ օրէնքէ դուրս համարուի: Ոչ հատուցում, ոչ վերահաստատում:

Ինչ կը վերաբերի հայրենիքի մէջ թողուած կալուածներուն, եկեղեցիներուն, վանքերուն, դպրոցներուն, դրաղարաններուն, թանգարաններուն, որոնց վնասները միլիտաներու կը հասնին, անոնք բոլորն ալ այրուած, ոչնչացուած են: Իսկ եթէ մնացեր են, գրաւուած են թուրք կառավարութեան ձեռքով:

Այս ամէնը անհրաժեշտ է այսպէս թուրքի կերպով յիշել, որպէսզի ըմբռնելի լինի այդքան շուտ մոռացութեան տրուած հայ ժողովուրդի ողբերգութիւնը:

Բոլոր այս խնդիրները եւ անոնցմէ բխած բազմաթիւ ուրիշներ, որոնք պակաս գործնական արժէք չեն ներկայացներ, ձինչեւ հիմա կը մնան անլուծելի:

Պարզ է, որ հայկական հարցի վերաբերեալ Լօզանի դաշնագիրը դարձաւ պատրանք մը. ան կնքուեցաւ անտես առնելով հայ ժողովուր-

դը, կարծես թէ ան դոյութիւն չունենար: Լօզանի դաշնագիրը, արեւելեան ժողովուրդի մը բնաստը թողելով անորոշութեան մէջ, չի կարող ծառայել ոչ խաղաղութեան եւ ոչ արդարութեան:

Այս պարագաներու մէջ Պատուիրակութիւնս որպէս դաշնագիրը ստորագրող կողմ, թոյլ կուտայ ընել վերապահում բոլոր այն խնդիրներու մասին, որոնք կը վերաբերին իր իրաւունքներու պաշտպանութեան, զոր Դաշնակից պետութիւնները խոստացած էին մեզ պատերազմէն առաջ եւ պատերազմի ընթացքին եւ որ վաւերացուցած է Սէվրի դաշնագրով եւ անոր յաջորդող խորհրդաժողովներով:

Ինչպիսի վերաբերմունքի ալ արժանանալու լինի այժմ մեր հանդիսաւոր բողոքը, Հ. Հ. Պատուիրակութիւնը՝ յարգելով հայ ժողովուրդի կողմէն իրեն տրուած լիազօրութիւնը, իր բովանդակ ուժով կը ծառանայ Լօզանի դաշնագրի դէմ:

Լիայոյս ենք, որ պատմութիւնը կը լինի լաւագոյն դատաւորը:

Հ. Հ. Պատուիրակութեան
Նախագահ՝ Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԴԱՏԸ

Գրեց՝ Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

II

Գերմանո-լեի տագնապը. — Գերմանիոյ ռազմական պատրաստութիւնները. — Ասկաի մնացած կնիքներ. — Նոր պատերազմներու հաւանականութիւնը. — Խորհրդային Ռուսաստանը. — Թիւրքիոյ բռնելիք դիրքը. — Վրդովիչ հեռանկար. —

Լեհական կնճիոր կայ: Լեհաստանը կայ, դրուած Հայաստանի պէս, մուրճին ու սալին միջեւ, Գերմանիոյ եւ Ռուսիոյ սահմաններում: Ո՞րն է այն ոյժը, որ կարող է միանգամ ընդմիշտ ապահովել այդ երկիրը, որ գերութեան դարաւոր մղձաւանջէն յետոյ, ազատ կեանքի կոչուեցաւ, բայց կ'ապրի ահ ու դողի մէջ:

Գերմանիան դեռ կը հաշտուի — ատամներու կրճտոցով — Ալբաս Լօսէնի կորստեան հետ: Բայց չուզեր հաշտուիլ «իր լեհական նա-

հանգներու» անջատման մտքի հետ... Եւ յամաօրէն կը պահանջէ սահմաններու շրտկումն:

Գերմանացիք, իրաւ է, կ'ըսեն, թէ պատերազմ չպիտի ընեն, բունի միջոցներու չպիտի դիմեն՝ այդ նպատակին հասնելու համար: Բայց ո՞վ կարող է երաշխաւորել այդ... Ոչ իսկ ինքը Ստրեզեման:

Լեհաստանի եւ Գերմանիոյ մէջը չափազանց բարդ է: Վերսայլի դաշնագիրը տուեր է լեհերուն կտոր մը ծովեզերք«Գրինիա» կոչ-